

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Ծրագրի անվանումը՝ «ՄԿՈՒ համակարգում իրականացված բարեփոխումների արդյունքների գնահատում»

Ծրագրի տևողությունը՝ 09.07.2020-15.09.2020թ.

Իրականացման եղանակը՝ 2 փուլով.

- տվյալների հավաքագրում (հեռավար),
- տվյալների վերլուծություն և գնահատման զեկույցի կազմում (հեռավար, առկա)

Գնահատվող ուսումնական հաստատության անվանումը՝ «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ

Գնահատման ժամանակահատվածը՝ 2017-2018թթ., 2018-2019թթ. և 2019-2020թթ. ուսումնական տարիներ

Գնահատող փորձագետ՝ Վահագն Հակոբյան

Առդիր՝ 42 էջ:

Խտասկավառակ՝ նկարներով, այլ փաստաթղթերով:

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության տակ գործող Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը միջին մասնագիտական, բազմագործառության ուսումնական հաստատություն է , որն ունի 54 տարվա պատմություն: Քոլեջը հիմնադրվել է 1966 թվականին և կոչվել է Հրազդանի ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկում: 2000 թվականին տեխնիկումը վերանվանվել է Հրազդանի պետական քոլեջ, իսկ 2011 թվականի ապրիլի 21-ի թիվ 346-Ա/Ք հրամանի համաձայն՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ:

Իր գործունեության տարիներին քոլեջը բազմապիսի մասնագիտություններով բազմաթիվ կադրեր է պատրաստել, որոնցից շատերն աշխատել և աշխատում են տարածաշրջանի մի շարք հիմնարկ ձեռնարկություններում:

Այժմ քոլեջը տարածաշրջանին և հնարավոր շահառուներին ներկայանում է հիմնովին նորոգված, արդի տեխնիկական միջոցներով և կահույքով համալրված կառույցի տեսքով, որը հաստատության ուժեղ կողմերից մեկն է : Քոլեջն ունի համակարգչային ժամանանակակից տեխնիկայով ապահովված լսարաններ (գործում է ինտերնետային կապ), լինգվալոգիայի սարքավորումներ, մասնագիտական արհեստանոցներ, լաբորատորիաներ, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, գրադարան:

«ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ»

1. Որակի պահովման ազգային կենտրոնի հետ համագործակցություն

1.1 Ի՞նչպիսի կապեր ունի հաստատությունը Որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) հետ (անցել է արդյո՞ք հաստատությունը հավատարմագրման գործընթացը)՝ շարադրեք տեղեկատվություն համագործակցության վերաբերյալ:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում որակի ներդրման գործընթացը մեկնարկել է 2015 թվականից: Քոլեջի աշխատակիցները ՈԱԱԿԻ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումների ընթացքում ծանոթացել են քոլեջներում որակի ներքին ապահովման գործընթացների ներդրմանը, ինստիտուցիոնալ ինքնավերլուծության ձևաչափին, որից հետո ստացված տեղեկությունը ներկայացրել են քոլեջի աշխատակիցներին, և իրականացվել է վերապատրաստում դասախոսների շրջանում: 2016 թվականին տարածաշրջանային մի քանի քոլեջներում(նաև՝ ԿՏՊԲ-ում) իրականացվել է փորձական վերլուծություն երկու չափանիշներով և կազմակերպվել են փոխադարձ փորձագիտական այցեր, իսկ 2017 թվականին քոլեջում իրականացվել է նախնական ինստիտուցիոնալ ինքնավերլուծություն բոլոր չափանիշներով: 2018 թվականից հաստատությունում գործում է «Որակի ներքին ապահովման կենտրոն», իսկ 2020թ. հուլիսի 10-ին քոլեջը ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմում-հայտ է ներկայացրել ՈԱԱԿ: Հավատարմագրման գործընթացն ընթացքի մեջ է:

1.2 Վերապատրաստվել են արդյո՞ք հաստատության աշխատակիցները ՈԱԱԿ-ում որպես փորձագետներ: Եթե այո, ապա լրացրեք ստորև տրված աղյուսակը:

N	Ա.Ա.Հ.	Ջբաղեցրած պաշտոնը	Վերապատրաստման տարեթիվ
1	Հակոբյան Քրիստինե Մարտինի	կադրերի տեսուչ, դասախոս	2017-2019թթ.
2	Պետրոսյան Զվարթ Արտուրիկի	դասախոս	2020թ.
3	Ներսիսյան Լիլիթ Ռազմիկի	դասախոս	2020թ.

2. Կարիերայի կենտրոնի գործունեությունը

2.1 Ինչ գործունեություն է ծավալում կարիերայի կենտրոնը (շարադրանքի ձևով ներկայացրեք, կարող եք կցել փաստաթղթեր):

Կարիերայի կենտրոնը տեղեկատվության, խորհրդատվության, կարիերայի կրթության և ուղղորդման ծառայությունների մատուցման միջոցով նպաստում է աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանն և կարիերայի պլանավորման հմտությունների ձևավորմանը:

Կարիերայի կենտրոնի կանոնակարգը, պաշտոնի նկարագիրը և աշխատանքային պլանը կցվում են:

2.2 Նշեք այն գործատուներին ու կազմակերպություններին, ինչպես նաև նրանց հետ համագործակցության ոլորտն ու ձևաչափը, որոնց հետ համագործակցում եք:

N	Գործատու, կազմակերպություն	Համագործակցության ոլորտը	Համագործակցության ձևաչափը
1	«Մարրիոթ» Ծաղկաձոր հյուրանոցային համալիր*	տուրիզմ	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում, դուալ կրթական ծրագրի գործնական դասընթացների կազմակերպում
2	«Ալվա» հանգստյան տուն*	տուրիզմ	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում, դուալ կրթական ծրագրի գործնական դասընթացների կազմակերպում
3	«ՆՅՈՒ հորիզոն » գրուպ*	տուրիզմ	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում
4	«Ալպինա» հանգստյան տուն	տուրիզմ	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում
5	«Բեսթ Ռեսորթ Ալվերան»*	տուրիզմ	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում, դուալ կրթական ծրագրի գործնական դասընթացների կազմակերպում
6	«Մուլտի ռեստ» հյուրանոց	տուրիզմ	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում

7	«Գրին ֆերմեր»ՍՊԸ*	գյուղատնտեսություն	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում
8	Հրազդանի «ՃՇՇՁ» ՍՊԸ *	ավտոճանապարհային	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում
9	«Տելնետ » ՍՊԸ	տեղեկատվական տեխնոլոգիաներ	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում
10	«Հայանտառ» ՊՈԱԿ	բնապահպանություն	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում
11	«Բազեկատ» ՍՊԸ	դիզայն	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում
12	«Սասուն Համբարձումյան» ԱԶ	հաշվապահություն	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում
13	«Զավան Գրուպ» ՍՊԸ	դիզայն	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում
14	ՀՋՏԿ*	գբադվածության պետական գործակալություն	Պետական ծրագրերի իրականացում,
15	«Վանակատ» ԲԲԸ	փականագործություն	ուսումնասարտադրական պրակտիկայի անցկացում

*նաև աշխատանքի տեղավորում

2.3 Աշխատող շրջանավարտների թիվը:

N	Շրջանավարտներ	2017թ.	2018թ.	2019թ.
1	Իրենց մասնագիտությամբ աշխատանքի անցած	26	36	5
2	Ուսումնական հաստատությունում	-	-	1

	աշխատանքի անցած			
3	Ոչ իրենց մասնագիտությամբ աշխատանքի անցած	40	40	13

2.4 Ի՞նչ քայլեր են անհրաժեշտ կենտրոնի գործունեության արդյունավետության բարձրացման համար:

- Կարիերայի կենտրոնի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար հարկավոր է հնարավորինս շատ գործատուներ ներգրավել, փոխգործակցել նաև առաջատար ձեռնարկությունների հետ:
- Կապեր հաստատել գործատուների հետ և ներկայացնել վերջինիս պահանջների առանձնահատկությունները քոլեջում: Գործատուների առաջարկի հիման վրա համապատասխան ստորաբաժանումներում կազմակերպել քննարկումներ և ներկայացնել առաջարկությունների փաթեթը:
- Կազմակերպել ուսանողների ճանաչողական այցեր արտադրական տարածքներ
- Աշխատանք առաջարկող կազմակերպությունների կողմից առաջնային համարվող պահանջների և դրանց զարգացման միտումների պարբերաբար ուսումնասիրություն:
- Աշխատաշուկայի զարգացման հեռանկարները ժամանակակից մասնագիտությունների և զբաղվածության հետ առնչվող այլ հիմնահարցերի պարբերաբար ուսումնասիրություն:

3. Ձեռներեցություն մոդուլի ներդրումը

3.1 Ներառված է արդյո՞ք այդ մոդուլը ուսումնական ծրագրերում:

Եթե այո, ապա.

- ո՞ր թվականից է ներառված.
«Ձեռներեցություն» մոդուլը ուսումնական ծրագրերում ներառվել է 2018 թ.-ից:
- ո՞ր մասնագիտություններում .

Մասնագիտություն	Ներդրման տարին	Դասավանդման տարին
0411.01.5 «Հաշվապահական հաշվառում»	2018թ.	2020-2021 ուստարվանից
0613.01.5 «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»	2018թ.	2021-2022 ուստարվանից
0413.06.5 «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»	2018թ.	2021-2022 ուստարվանից
0212.01.5 «Դիզայն»	2018թ.	2021-2022 ուստարվանից
1041.01.5 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում»	2018թ.	2020-2021 ուստարվանից
0732.10.4 «Գազային սարքերի և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում»	2018թ.	2020-2021 ուստարվանից
0811.01.5 «Ջերմատնային տնտեսություն»	2018թ.	2020-2021 ուստարվանից
0911.04.5 «Ատամնատեխնիկական գործ»	2018թ.	2020-2021 ուստարվանից
0913.01.5 «Քույրական գործ»	2018թ.	2021-2022 ուստարվանից
0916.01.5 «Դեղագործություն»	2018թ.	2020-2021 ուստարվանից

- Ինչքանո՞վ է տեղական ձեռնարկատիրական միջավայրի առանձնահատկություններն օգտագործվում մոդուլի դասավանդման ընթացքում

Տեղական ձեռնարկատիրական միջավայրի առանձնահատկությունները պետք է երևան գործնական ուսուցման ժամանակ և ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքներում:

3.2 Վերապատրաստվել է արդյոք «Ձեռներեցություն» մոդուլը դասավանդողը:

Եթե այո, ապա լրացրեք տվյալները:

	Աշխատակցի Ա.Ա.Հ	Դասավանդող մասնագիտությունը	Վերապատրաստող կազմակերպությունը	Վերապատրաստման թվականը
1	Մարգարյան Մարինե Մաքսիմի	0411.01.5 «Հաշվապահական հաշվառում»	Մկուզակ, GIZ	2018 թ. և 2020 թ.
2	Արշակյան Քրիստինե Ալբերտի	0413.06.5 «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված ծիմացությամբ» 0732.10.4 «Գազային սարքերի և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» 0212.01.5 «Դիզայն»	Մկուզակ	2018 թ.
3	Մաթևոսյան Թերեզա Ռուբիկի	1041.01.5 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» 0916.01.5 «Դեղագործություն» 0911.04.5 «Ատամնատեխնիկական գործ» 0913.01.5 «Քույրական գործ»	GIZ	2020 թ.

4. Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող ուսանողներ

Ի՞նչ պայմաններ են առկա ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց ուսումնառությունն իրականացնելու համար (թեքահարթակ, զուգարան, կահավորում և այլն):

Հաշմանդամություն ունեցող շահակիցների համար քոլեջի մուտքի մոտ կառուցվել է թեքահարթակ, իսկ առաջին հարկի սանհանգույցը հարմարեցվել է շարժասայլակով տեղաշարժվող անձանց համար:

5. ՄԿՈՒ հաստատությունների գործարկված ցանց (network)

5.1 Ո՞ր հաստատությունների հետ եք համագործակցել ցանցի միջոցով: Ո՞ր ոլորտում և ի՞նչ ձևաչափով:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը ՄԿՈՒ հաստատությունների գործարկված ցանցի(network) միջոցով չի համագործակցում այլ ուսումնական հաստատությունների հետ:

6. Ուսումնական ծրագրեր

6.1. Լրացրեք ուսումնական ծրագրերի վերաբերյալ աղյուսակը՝ ուշադրություն դարձնելով հետևյալ հարցերին.

- Ուսումնական ծրագրերի կազմման դրվածքը և վիճակը
- Ուսումնական ծրագրերի վերանայման դրվածքը և վիճակը
- Ծրագրերում տեղական առանձնահատկությունների արտացոլման վիճակը, արդյունքները,
- գործատուների մասնակցությունը ծրագրերի կազմանը (ծրագրի անվանումը, գործատուների տվյալները):

Մասնագիտության անվանումը	2017/2018		2018/2019		2019/2020		Գործատուների մասնակցությունը ծրագրի կազմմանը	Ծրագրերի կազմման և վերանայման դրվածքը (պետք է ցույց տրվի, թե որտեղից է սկսվում ծրագրերի կազմման կամ վերանայման աշխատանքները, դրանց նախագծերի քննարկումը և ծրագրի հաստատումը)
	Մասնագ.	Որակ.	Մասնագ.	Որակ.	Մասնագ.	Որակ.		
0212.01.5 «Դիզայն»	0212.01	դիզայն	0212.01.	դիզայն	0212.01.5	դիզայն		Հիմքը չափորոշիչ, քննարկվել է ամբիոնի նիստում, քննարկվել է ուս.մեթոդ.

	.5	եր	5	եր		ր		խորհրդում, հավանության է արժանացել, հաստատվել է տնօրենի կողմից: Վերանայվում է ամբիոնների կողմից՝ հիմնավորված առաջարկության դեպքում
0411.01.5 «Հաշվապահական հաշվառում»	0411.01 .5	հաշվա պահ	0411.01. 5	հաշվա պահ	0411.01.5	հաշվապ ահ		
0413.06.5 «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»	0413.0 6.5	Զբոսաշ րջությա ն մենեջեր	0413.06. 5	Զբոսաշ րջությա ն մենեջեր	0413.06. 5	Զբոսաշր ջության մենեջեր		
1041.01.5 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում»	1041.01 .5	Տեխնիկ - կարգա վար	1041.01. 5	Տեխնիկ - կարգա վար	1041.01.5	Տեխնիկ- կարգավ ար		
0613.01.5 «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»	0613.0 1.5	տեխնիկ - ծրագր ավորող	0613.01. 5	տեխնիկ - ծրագր ավորող	0613.01. 5	տեխնիկ- ծրագրա վորող		
0732.10.5 «Գազային սարքերի և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում»	0732.1 0.4	գազ.սա րք. շահ.և նորոգ. փական ագործ	0732.10. 4	գազ.սա րք. շահ.և նորոգ. փական ագործ	0732.10. 4	գազ.սա րք. շահ.և նորոգ. փական ագործ		
0911.04.5 «Ատամնատեխնիկական գործ»	0911.0 4.5	ատամն ատեխն իկ	0911.04. 5	ատամն ատեխն իկ	0911.04. 5	ատամն ատեխնի կ		
0916.04.5 «Դեղագործություն»	0911.0	դեղագո	0911.04.	դեղագո	0911.04.	դեղագո		

	4.5	րծ	5	րծ	5	րծ		
0913.01.5 «Քույրական գործ»	0913.0 1.5	բուժքույ ր	0913.01. 5	բուժքույ ր	0913.01. 5	բուժքույր		
Լիցենզավորված, բայց չդասավանդվող մասնագիտություններ	չկան							

6.2 Հակիրճ նկարագրեք գործատուների կողմից կատարված առաջարկությունները:

Առայժմ ոչ մի առաջարկություն չկա:

6.3 Հակիրճ ներկայացրեք ընտրովի դասընթացների կազմը և պրակտիկաների ծրագրերը:

(Ի՞նչ թերություններ են ի հայտ եկել, ե՞րբ են վերանայվել, ու՞մ առաջարկով, ի՞նչ փոփոխություններ են իրականացվել):

- 0411.01.5 «Հաշվապահական հաշվառում» - ընտրովի դասընթաց՝ ֆինանսներ և վարկ, կառավարչական հաշվառում
- 0613.01.5 «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» - ընտրովի դասընթաց՝ ավտոկադ
- 0212.01.5 «Դիզայն» - ընտրովի դասընթաց՝ հանրակրթական առարկաներ,/ հիմք՝ N 01/08.1/6223-14 03-06-2014թ. հրաման
- 0413.06.5 «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» - ընտրովի դասընթաց՝ գործնական հաղորդակցություն օտար լեզվով
- 1041.01.5 «Փոխադրումների կազմա-կերպում և կառավարում տրանսպորտում» - ընտրովի դասընթաց՝ ավտոմեքենայի վարման հնարքներ
- 0916.04.5 «Դեղագործություն» - ընտրովի դասընթաց՝ ԱՍՀ-5-11-002 Ոչ պարենային ապրանքների դասակարգումը և սպառողական հատկանիշները
- 0911.04.5 «Ատամնատեխնիկական գործ» - ընտրովի դասընթաց՝ Տարիքային հոգեբանություն
- 0913.01.5 «Քույրական գործ» - ընտրովի դասընթաց՝ դիետոլոգիա և սնուցում

Պրակտիկաների բոլոր ծրագրերը կազմվում են պարապող դասախոսների կողմից՝ հիմք ընդունելով մոդուլային ծրագրերը: Քննարկվում են ամբիոնի նիստերում, ներկայացվում են ուսումնամեթոդական խորհրդի նիստում և հավանության արժանանալու դեպքում, ներկայացվում են տնօրենին հաստատման:

7. Ըստ մասնագիտությունների գործող ուսումնական պլաններում տեսական-գործնական պարապմունքների ժամաքանակների հարաբերակցությունը

7.1 Նշեք ընդհանուր ժամաքանակում տեսական-գործնական պարապմունքների ժամաքանակների հարաբերակցությունը

Հ/հ	Մասնագիտության անվանումը	Տեսական/գործնական հարաբերակցությունը (ժամաքանակով)		
		տեսական	գործնական	ընդամենը
1.	0413.06.5 «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»	1334	2896	4230
2.	0613.01.5 «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»	1382	2438	3820
3.	1041.01.5 «Փոխադրումների կազմա-կերպում և կառավարում տրանսպորտում»	1466	2600	4066
4.	0911.04.5 «Ատամնատեխնիկական գործ»	1062	2720	3782
5.	0916.04.5 «Դեղագործություն»	1214	2046	3260
6.	0913.01.5 «Քույրական գործ»	1770	3100	4870
7.	0212.01.5 «Դիզայն»	1202	3100	4302
8.	0411.01.5 «Հաշվապահական հաշվառում»	1138	1982	3120
9.	0811.01.5 «Զերմատնային տնտեսություն»	1167	2097	3264
10.	0732.10.4 «Գազային սարքերի և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում»	954	1860	2814
11.	Ընդամենը	12689	24839	37528

7.2 Հարաբերակցությունը սահմանելու տրամաբանությունը և հիմնավորումները (համապատասխանությունը արդյունքներին միտված ուսումնառության տրամաբանությանը և պահանջներին)

Ծրագրերը կազմելիս տեսական/գործնական ժամերի հարաբերակցությունը ձևավորում է պարապող դասախոսը՝ հաշվի առնելով մոդուլների առանձնահատկությունները: Դրանք ամբիոններում վերջնական քննարկման արդյունքում կազմվում են արձանագրություններ և ներկայացվում հաստատման:

8. COVID 19 մարտահրավերներ

8.1 Արդյո՞ք իրականացրել եք հեռավար ուսուցում COVID 19 պայմաններում, եթե այո, ապա լրացրեք աղյուսակը:

Հ/հ	Մասնագիտության անվանումը	2-րդ կիսամյակի շաբաթների թիվը ըստ կուրսերի				Դասընթացի որ մասն է իրականացվել հեռավար								Դասընթացի անցկացման ձևաչափը
						Մինչև 13.03 Շաբաթ*36ժ				13.03-ից Հետո Շաբաթ*36ժ				
		I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	
1	0411.01.5«Հաշվապահական հաշվառում»	19	16	11	-	6	6	6	-	13	10	5	-	Viber,ZOOM,Messenger
2	0613.01.5«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»	19	19	3	3	6	6	3	3	13	13	Պ/Պ	Պ/Պ	Viber,ZOOM,Messenger
3	0413.06.5 «Ձրոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված	19	16	12	12	6	6	6	6	13	10	6	6	Viber,ZOOM.Messenger, google classroom

	իմացությամբ»														
4	1041.01.5«Փոխադրումների կազմա-կերպում և կառավարում տրանսպորտում»	19	15	15	-	6	6	6	-	13	9	9	-	Viber,ZOOMMessenger	
5	0212.01.5 «Դիզայն»	18	18	18	-	6	6	6	-	12	12	12	-	Viber,ZOOM,Messenger	
6	0811.01.5«Ջերմատնային տնտեսություն»	19	14	-	-	6	6	-	-	13	8	-	-	Viber,ZOOM,Messenger	
7	0732.10.4«Գազային սարքերի և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում»	17	17	17	-	6	6	6	-	11	11	11	-	Viber,ZOOM,Messenger	
8	09.16.04.5«Դեղագործություն»	19	14	11	-	6	6	6	-	13	8	5		Viber,ZOOM,Messenger	
9	0911.04.5«Ատամնատեխնիկական գործ»		20	16	-		6	6	6		-	14	10		Viber,ZOOM,Messenger
10	0913.01.5«Քույրական գործ»		18	17	12		6	6	6			12	11	6	Viber,ZOOM,Messenger

8.2 Նշեք հեռավար դասընթացի իրականացման ընթացքում հանդիպած դժվարությունները.

1. Տեխնիկական միջոցների պակաս, ինտերնետ կապ
2. Որոշ սովորողների ոչ լուրջ վերաբերմունքը իրավիճակին և դասապրոցեսին
3. Գործընթացի հանկարծակիությունը
4. Էլեկտրոնային մատյանների բացակայությունը
5. Միասնական հարթակի բացակայությունը
6. Այն ինչ հնարավոր է անել լսարնում, անհնար է անել հեռավար ուսուցման ժամանակ
7. Որոշ մեթոդների կիրառության դժվարություն

8.Գրագողության դեմ պայքարի անհնարինություն, դժվարություն բանավոր հարցման ժամանակ խնդիրներ

9.Առողջական

8.3Ի՞նչ նոր հնարավորություններ են առաջացել COVID19 պայմաններում և հետո ուսումնառություն կազմակերպելու համար:

- 1.Ուսանողների մոտ զարգանում է ինքնուրույն հետազոտական հմտություններ, համացանցը օգտագործվում է բացառապես կրթական նպատակներով,
- 2.Համացանցում որոնողական նոր գործիքների յուրացում
- 3.Թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների ինքնակրթության զարգացում
- 2.Նոր հարթակներից օգտվելու հնարավորություն
- 3.Օնլայն վերապատրաստումների հնարավորություն

9. Աշխատանքի վրա հիմնված կրթություն և լրացուցիչ կրթական ծրագրեր

9.1 Ո՞ր կառույցների հետ եք համագործակցում աշխատանքի վրա հիմնված ուսուցում (ԱՀՈՒ) իրականացնելիս:

*Եթե չեք իրականացնում, անցեք 9.3 կետին:

Հ/հ	Մասնագիտության անվանումը, որակավորումը	Համագործակցող կառույցները	Համագործակցող գործատուները	Տարեթիվը	Ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը
1	0413.06.5-Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ	1.«Ծաղկաձոր Մարրիոթ» հյուրանոց 2.Ծաղկաձորի«Ավա»հյուրանոց 3.«Բեսթ ռեսորթ Աղվերան»		2019-2020	25

9.2 Ինչպես ե՞ք հետամուտ լինելու ԱՀՈՒ ծրագրերով շրջանավարտների աշխատանքի տեղավորման հարցում:

Պատրաստվում եք արդյո՞ք շարունակել իրականացնել ԱՀՈՒ ծրագրի ավարտից հետո:

Ծրագիրը ներդրվել է 2019 թվականից, այն նոր է, սակայն նախնական համագործակցային պայմանավորվածությամբ լավագույն ուսանողները կհամալրեն վերոհիշյալ հյուրանոցային համալիրների աշխատակազմը:

Ծրագիրը շարունակելը կախված է նոր գործընկերների ներգրավվածությունից:

9.3 Ներկայացրեք ուսումնական հաստատության կողմից լրացուցիչ կրթական ծառայությունների (այդ թվում կարճաժամկետ դասընթացներ) կազմակերպման վիճակը:

***Եթե չեք իրականացնում, անցեք 10-րդ կետին:**

Ծրագրի անվանումը	2017/2018	Գործատուները և այլ կառույցները ում հետ համագործակցել են ծրագիրն իրականացնելիս	Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը	Ծրագրի հիմնական շահառուները
Կարճաժամկետ	-	-	-	-
	-	-	-	-
	-	-	-	-
Երկարաժամկետ	-	-	-	-
	-	-	-	-
	-	-	-	-
Ծրագրի անվանումը	2018/2019	Գործատուները և այլ կառույցները ում հետ համագործակցել են ծրագիրն իրականացնելիս	Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը	Ծրագրի հիմնական շահառուները
Կարճաժամկետ	-	-	-	-
	-	-	-	-
	-	-	-	-
Երկարաժամկետ	-	-	-	-
	-	-	-	-
	-	-	-	-

Ծրագրի անվանումը	2019/2020	Գործատուները և այլ կառույցները ում հետ համագործակցել են ծրագիրն իրականացնելիս	Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը	Ծրագրի հիմնական շահառուները
Կարճաժամկետ	Արևային և ջերմային կայանների տեղակայում և շահագործում	«Ֆրիներջի» ԱՊԸ	Ստանալ անվտանգ, էկոլոգիապես մաքուր էներգիա	15 տարեկանից բարձր ցանկացած ոք՝ առանց սեռատարիքային սահմանափակման
Երկարաժամկետ	0413.06.5- Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ	1.«Ծաղկաձոր Մարրիոթ» հյուրանոց 2.Ծաղկաձորի «Ալվա» հյուրանոց 3.«Բեսթ ռեսորթ Աղվերան»	Որակյալ և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող կադրերի պատրաստում	2018-2019 ուստարում այդ մասնագիտությամբ ընդունված ուսանողները

9.4 Արդյո՞ք ԱՀՈՒ մեթոդաբանությամբ կազմված դասընթացները (այդ թվում և կարճաժամկետ) համապատասխանում է շուկայի այդ պահի դրությամբ առկա պահանջարկին և դասընթացի թեման պահանջարկված է համայնքում: Ունե՞ք այս մասով հետազոտություն:

Այդ մասով չունենք հատուկ իրականացրած հետազոտություն, սակայն ներկայացված բոլոր մասնագիտությունները համապատասխանում են տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին, քանի որ արդիական են:

10. Դասախոսական կազմը

10.1 Լրացրեք ուսումնական հաստատության մանկավարժական կազմի վերաբերյալ տվյալները ըստ աղյուսակների: Քոլեջի մանկավարժական կազմը 2017-2018թթ.

Տարիքային խումբ	Ընդամենը՝ մարդ	Որից					Նշել հիմնական աշխատող է, թե համատեղությամբ
		բ/կրթ	մ/մ	իգական	արական	վերապատ- րաստված (նշել կամ տարեթիվը կամ մասնակցության քանակը)	
20-35 տարեկան	13	13		10	3	5	2 համատեղություն
36-45 տարեկան	11	11		6	5	6	1 համատեղություն
46-55	5	5		4	1	3	
56-65	7	7		6	1	2	
65+	1	1		-	1		

Գերակշռող տարիքային խումբը 20-35 տարեկանն է:

Քուլեջի մանկավարժական կազմը 2018-2019թթ.

Տարիքային խումբ	Ընդամենը՝ մարդ	Որից					Նշել հիմնական աշխատող է, թե համատեղությամբ
		բ/կրթ	մ/մ	իգական	արական	վերապատ- րաստված (նշել կամ տարեթիվը կամ մասնակցության	

						քանակը)	
20-35 տարեկան	15	15		12	3	5	2 համատեղություն
36-45 տարեկան	10	10		6	4	6	1 համատեղություն
46-55	5	5		4	1	3	
56-65	7	7		6	1	2	
65+	2	2		-	2		

Գերակշռող տարիքային խումբը 20-35 տարեկանն է:

Քուլեջի մանկավարժական կազմը 2019-2020թթ.

Տարիքային խումբ	Ընդամենը՝ մարդ	Որից					Նշել հիմնական աշխատող է, թե համատեղությամբ
		բ/կրթ	մ/մ	իզական	արական	վերապատ- րաստված (նշել կամ տարեթիվը կամ մասնակցության քանակը)	
20-35 տարեկան	14	14			13	1	5
36-45 տարեկան	19	19			16	3	6
46-55	5	5			4	1	3
56-65	9	9			6	3	2

65+	3	3		-	3	1	
-----	---	---	--	---	---	---	--

Գերակշռող տարիքային խումբը 36-45 տարեկանն է:

11. Ուսումնական հաստատության սովորողները

11.1 Լրացրեք ուսումնական հաստատության սովորողների կազմի վերաբերյալ տվյալները ըստ աղյուսակների:

Ուսումնական հաստատությունում սովորողների սեռային կազմը, թվաքանակի փոփոխությունը վերջին տարիներին

Սեռը	2017-2018թթ. (ընդամենը)		2018-2019թթ. (ընդամենը)		2019-2020թթ. (ընդամենը)	
	Տարվա սկզբին	Տարվա վերջին	Տարվա սկզբին	Տարվա վերջին	Տարվա սկզբին	Տարվա վերջին
Արական	245	169	271	190	280	228
Իգական	139	102	141	109	161	159

Ուսումնական հաստատություն ընդունվողների սեռային կազմը, թվաքանակի փոփոխությունը վերջին տարիներին

Սեռ	2017-2018թթ. (ընդամենը)	2018-2019թթ. (ընդամենը)	2019-2020թթ. (ընդամենը)
Արական	73	100	94
Իգական	60	36	49
Ընդամենը	133	136	143

12. Բարեփոխումների ընթացքը հաստատությունում

12.1 Ի՞նչպես եք գնահատում ուսումնական հաստատությունում իրականացված բարեփոխումների միջոցառումները: Ի՞նչ իրական ձեռքբերումներ ունեք (կրթության որակի բարձրացում, պետական ամփոփիչ ստուգումների արդյունքում դրական տեղաշարժեր, և այլն):

Քոլեջն անընդհատ ձգտում է բարեփոխման, գործընթացների բարելավման և միտում ունի միջազգայնացման, առաջավոր փորձի ներդրման: Իրականացվող գործընթացներն օգնում են, որպեսզի բարձրանա կրթության որակը, որը կնպաստի նոր շահակիցների ներգրավմանը, նոր գործընկերներ ունենալուն: Կրթության որակի բարձրացման հետ կապված բավականին խոսուն են պետական ամփոփիչ ատեստավորման արդյունքները. շատացել են քոլեջից բուհ դիմողները: Իրական ձեռքբերումներից կարող ենք նշել դասախոսական անձնակազմի երիտասարդացումը, կադրերի կայունությունը, աշխատավարձի բարձրացումը, ուսանողների՝ իրենց մասնագիտությամբ աշխատելու թվի ավելացումը և այլն:

13 ՍՔԱՅ ակումբ

Ունեք արդյոք ՍՔԱՅ ակումբ¹: Եթե այո, ապա ինչպե՞ս եք գնահատում ՍՔԱՅ ակումբի արդյունավետությունը՝ երիտասարդների շրջանում հարակից հմտություններ ձևավորելու առումով:

Ոչ, չունենք:

13. Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան:

Աղյուսակ 1

Հh	Շենք, շինություն, Հողատարածք, մարզահրապարակ, մարզադահլիճ	Վերանորոգված, կամ կառուցված, կամ նոր ձեռք բերված	2017-2018թթ.	2018-2019թթ.	2019-2020թթ.	Քանակը կամ չափը
1.	Շենք	Վերանորոգված	ընթացիկ	ընթացիկ	ընթացիկ	3514.17քմ
2.	կաթսայատուն	Վերանորոգված	-	-	-	24.84քմ

3.	Հողատարածք	-	-	-	-	0.543հա
4.	մարզահրապարակ	կառուցված	-	-	-	1200քմ
5.	մարզադահլիճ	Վերանորոգված	ընթացիկ	ընթացիկ	ընթացիկ	252քմ

Աղյուսակ 2

Հհ	Ուսումնամեթոդական գրականության անվանումը	նոր ձեռք բերված (ում կողմից) կամ գնված	2017-2018թթ.	2018-2019թթ.	2019-2020թթ.	Քանակը
1.	Գեղարվեստական գրականություն	-	-	-	-	2995
2.	Մասնագիտական գրականություն	ՄԿՈՒԶԱԿ	25	98	-	408
3.	Դասագրքեր	Երևանի թիվ 112 ավագ դպրոց	720	-	-	720
4.	Ուսումնամեթոդական գրականություն	ՄԿՈՒԶԱԿ	3	9	-	250

Աղյուսակ 3

Հհ	Ուսումնական կաբինետ, լաբորատորիա, արհեստանոց	Կահավորում կամ ստեղծում (ում կողմից)	2017-2018թթ.	2018-2019թթ.	2019-2020թթ.	Ծանոթություն
1.	7 ուսումնական կաբինետ	Ստեղծվել է պետական ֆինանսավորմամբ	ընթացիկ	ընթացիկ	ընթացիկ	
2.	5 լաբորատորիա	Ստեղծվել է պետական ֆինանսավորմամբ	ընթացիկ	ընթացիկ	ընթացիկ	
3.	3 արհեստանոց	Ստեղծվել է պետական ֆինանսավորմամբ	ընթացիկ	ընթացիկ	ընթացիկ	

14. Այլ տվյալներ

Շարադրել լրացուցիչ տեղեկատվություն կամ կցել նյութեր, որոնք Ձեր կարծիքով կամբողջացնեն 2017-2020թթ. ուսումնական հաստատության կողմից իրականացված աշխատանքները, մասնավորապես ձեռքբերումները (էլեկտրոնային կրիչի, սկավառակի կամ էլեկտրոնային ֆայլի ձևով):

2018 թվականից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում ստեղծվել են բազմաթիվ կանոնակարգեր, ընթացակարգեր, բոլոր աշխատակիցների համար մշակվել են պաշտոնի նկարագրեր, որոնք նախկինում չեն եղել: Աշխատանքային գործընթացը ամբողջությամբ կանոնակարգված է, ինչը թույլ է տալիս հասնել ռազմավարական նպատակներին և պատրաստվել 2020 թվականի վերջին սպասվող ինստիտուցիոնալ հավատարմագրմանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով. հաշվետու տարիներին (2017-2019թթ.) քոլեջում իրականացվել են ուսումնառության գործընթացի արդյունավետության բարձրացմանը նպաստող աշխատանքներ, որոնք շարունակական բնույթ են կրում:

Ուսումնական հաստատությունը հաջողությամբ համագործակցում է մարզի գործատուների հետ, ինչի արդյունքում ուսանողները ուսումնաարտադրական պրակտիկա են անցնում գործատուների մոտ: «Բեսթ Ռեսորթ Ադվերան» կազմակերպության հետ համագործակցության արդյունքում քոլեջը կազմակերպում է ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի և դուալ կրթական ծրագրի գործնական դասերի անցկացումը:

Ուսումնական հաստատությունը հաջողությամբ համագործակցում է Որակի ապահովման ազգային կենտրոնի հետ, ինչն առավել արդյունավետ է դարձնում բարեփոխումների իրականացումը, աջակցում է որակի ներքին ապահովման գործընթացների ներդրմանը, ինստիտուցիոնալ ինքնավերլուծության իրականացմանը:

Քոլեջի Կարիերայի կենտրոնն իր աշխատանքներն իրականացնում է ըստ նախապես կազմված աշխատանքային ծրագրի, որը հաստատվում է տնօրենի կողմից: Այդ ծրագրում քոլեջի ուսանողների և աշխատաշուկայի կապի ապահովմանն ուղղված ամենամսյա ընթացիկ միջոցառումներ են ներկայացված: Դրանց վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ կենտրոնի

աշխատակիցները տիրապետում են իրենց առջև դրված խնդիրների բովանդակությանը և դրանց լուծման համար իրատեսական լուծումներ են առաջարկում: Քոլեջում ներդրվել է Ձեռներեցություն մոդուլը, ինչը կնպաստի ապագա շրջանավարտների ավելի մրցունակ մասնագետ դառնալուն: Քանի որ մոդուլը դասավանդողները վերապատրաստվել են ՄԿՈՒԶԱԿ-ի և GIZ-ի կողմից, կարծում ենք մոդուլի ներդրումը և դասավանդումը կլինի պատշաճ որակով: Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող ուսանողների համար ապահովված են նվազագույն պայմաններ՝ թեքահարթակ և սանհանգույցի կահավորում: Ուսումնական հաստատության սովորողների քանակը տարվա սկզբին և վերջին տարբեր է: Թվերի փոփոխություն նկատվում է ինչպես արական սեռի ուսանողների, այնպես էլ իգականների մոտ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ արական սեռի թվերի փոփոխությունը կախված է միայն ուսանողների զինվորական ծառայության մեկնելու, կամ ծառայությունից վերադառնալու հետ: Իգական սեռի ուսանողները ամուսնանալուց հետո հիմնականում կիսատ են թողնում կրթությունը: Ուսումնական հաստատության դասախոսական կազմը գնալով երիտասարդանում է՝ ավելանում են երիտասարդ կադրերը:

Սակայն հաստատության գործունեությունում առկա են որոշ թերություններ, որոնցից հարկ ենք համարում նշել հետևյալները.

- վերջին երեք տարիներում չի փոխվել վերապատրաստված դասախոսների թվաքանակը: Կրթության առավել արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է, որպեսզի դասախոսական անձնակազմը պարբերաբար վերապատրաստման գործընթաց անցնի և ձեռք բերած հմտությունները կիրառի դավանդելիս:
- Շրջանավարտների չնչին մասն է կարողանում իր մասնագիտությամբ անցնել աշխատանքի, ուսումնական հաստատությունն այս մասով հետազոտություն չունի
- COVID 19-ով պայմանավորված ուսումնական հաստատությունում հեռավար անցկացված դասերի ժամանակ ի հայտ են եկել մի շարք թերություններ՝ որոշ սովորողներ անլուրջ են վերաբերվել իրավիճակին և դասապրոցեսին, չեն եղել էլեկտրոնային մատյաններ:
- Գործատուները մասնակցություն չեն ունենում ուսումնական ծրագրերի կազմանը, ինչը խիստ նվազեցնում է շրջանավարտների գործատուների համար մրցունակ մասնագետ դառնալու հնարավորությունները: Ընտրովի

դասընթացները և՛ կազմվում և՛ առաջարկվում են դասախոսների կողմից, ինչը կարող է ոչ միշտ լինել արդյունավետ:

- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը ՄԿՈՒ հաստատությունների գործարկված ցանցի(network) միջոցով չի համագործակցում այլ ուսումնական հաստատությունների հետ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաստատությունում բարեփոխումների շարունակականության ապահովման և զարգացման համար առաջարկում ենք իրականացնել հետևյալ միջոցառումները.

- COVID19 պայմաններում ուսումնառությունը կազմակերպելիս հնարավոր է ստեղծել էլեկտրոնային մատյաններ, լրացուցիչ վերահսկողական մեխանիզմներ մշակել և ներդնել՝ ուսանողների անլուրջ վերաբերմունքը փոխելու համար:
- Աշխատաշուկայի պահանջներն ավելի լավ ըմբռնելու համար անհրաժեշտ է հետազոտություն իրականացնել, որում կներգրավվեն նաև համայնքի գործատուները: Մասնագիտությունների արդիական լինելը դեռ բավարար չէ աշխատաշուկայի համար մրցունակ մասնագետ պատրաստելու համար:
- Անհրաժեշտ է արդիական և պահանջված մասնագիտությունը դասավանդելիս համագործակցել գործատուների հետ և ծրագրերը կազմվիս հաշվի առնել օրեցօր փոփոխվող աշխատաշուկայի պահանջները:
- Կրթության առավել արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է, որպեսզի դասախոսական անձնակազմը պարբերաբար վերապատրաստման գործընթաց անցի և ձեռք բերած հմտությունները կիրառի դասավանդելիս:
- Քոլեջի դասախոսների մասնագիտական զարգացման և աշխատանքային արդյունավետության բարձրացման համար առաջարկում ենք ներդնել խրախուսման մեխանիզմ՝ որպես գնահատման չափանիշ:
- Շրջանավարտների հետ հետադարձ կապի ժամանակ անդրադառնալ նաև մասնագիտությամբ չաշխատող շրջանավարտներին. վերլուծել աշխատաշուկայում նրանց չդրսևորվելու պատճառները և ըստ այդմ միջոցներ ձեռնարկել հետագայում աշխատաշուկայում մրցունակ մասնագետ պատրաստելու համար:

Ամփոփելով գնահատման արդյունքները՝ հաստատությունում իրականացվող բարեփոխումների ընթացքը համարում ենք արդյունավետ: